ԱԽԱԼՑԽԱՅՈՒՄ ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ՍՐԲՈՑ ԶՈՐԱՎԱՐԱՑ ՄԱՏՈՒՌԸ

Մայիսի 9-ին, Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման տոներին նվիրված, Ախալցխա քաղաքի Մարտա թաղամասում օրհնվեց և բացվեց Սրբոց Զորավարաց մատուռը: Սրբատեղին վերականգնվել ու վերակառուցվել է Ախալցխայի մի խումբ հայ երիտասարդների նախաձեռնությամբ և ջանքերով:

1851 թվականին բնության այս գեղեցիկ անկյունում Սամցխեի հայությունը կառուցում է փոքրիկ աղոթատուն և զետեղում այնտեղ Խաչքար-հուշակոթող: Ժողովրդի կողմից «Երկու եղբայրների մատուռ» անվանվող Սրբատեղին բնակավայրի հայության համար միակն է դառնում, և հավատացյալների հոսքն այստեղ չի դադարում նույնիսկ խորհրդային տարիներին: Տեղացիների վկայությամբ, 30 տարի առաջ անհատ մարդկանց ձեռքերով քանդվում են աղոթատունը, Խաչքարը, իսկ սրբագործված այլ քարեր ցաք ու ցրիվ են լինում: Այդ օրերից մատուռը քանդող 7 ընտանիքներին պատում են սարսափելի դժբախտություններ, և նրանք ստիպված որոնել են սկսում սրբագործված քարերն ու Խաչքարը՝ վերադարձնելով դրանք նույն տեղը:

Եվ ահա, 2006 թվականի մայիսի 9-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ և մասնակցությամբ Սամցխե-Ջավախքի փոխառաջնորդ Տ. Բարգեն աբեղա Սալբիյանի, Ախալցխայի հոգևոր հովիվ Տ. Շմավոն ավագ քահանա Սաղոյանի, Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Նարեկ քահանա Ղուշչյանի, կատարվեց վերակառուցյալ մատուռի օրհնության կարգը: Հաղթանակների օրվա խորհրդով այն անվանվեց «Սրբոց Զորավարաց»: Հավարտ արարողության, առաջնորդ Սրբազան Հայրը և փոխառաջնորդ Հայր Սուրբը շնորհավորեցին տեղի հայությանը՝ աղոթատան օրհնության և Հաղթանակի օրվա առիթներով: Նրանք բարձր գնահատեցին Ախալցխայի հայության նվիրումն ու հետևողականությունը հոգևոր-մշակութային արժեքներին և իրենց օրհնությունը բաշխեցին բարի գործը ստանձնող շինարար վարպետներին:

Արարողությունն ավարտվեց ավանդական մատաղի օրհնությամբ և տոնախմբությամբ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ